ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12, 1950 Общественные науки

ԼՐԱՏՈՒ

# ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՄԻԱՑՅԱԼ ՍԵՍԻԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ 30 ԱՄՅԱԿԻՆ

*1950 թվի հոկտեմբերի 26-ից մինչև նոյեմբերի 1-ը տեղի ունեցավ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Պատմության և Փիլիսոփայության բաժանմունքի և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի համատեղ սեսիան՝ նվիրված Հայաստանում սովետական իշխանության հաստատման 30-ամյակին։*

*Սեսիայի աշխատանքներին մասնակցում էին ակադեմիկոսներ Ե. Կոսմինսկին, Հ. Մանանդյանը, Ի. Օրբելին, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի թղթակից անդամներ Վ. Համբարձումյանը, Ա. Ուդալցովը, Ե. Ժուկովը, Կ. Տրևերը, Գ. Խաչապուրիձեն, Վ. Լազարևը, Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Ա. Շանիձեն, Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ-ի թղթակից անդամ Մ. Շիրալիևը, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Պատմության և Փիլիսոփայության բաժանմունքի գիտական քարտուղար Մ. Պոպովը, Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի դիրեկտոր Մ. Շարիֆլին, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ Ավ. Իսահակյանը, Գր. Ղափանցյանը, Հր. Աճառյանը, Աշ. Հովհաննիսյանը, Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Բ. Պիոտրովսկին, գիտության դոկտոր պրոֆեսորներ, ավագ գիտ. աշխատակիցներ և ուրիշներ։*

*Հոկտեմբերի 26-ի նիստում Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը բաց անելով սեսիան, ասաց.*

Товарищи! в ближайшее время исполняется 30 лет с того дня, как в Армении была установлена Советская власть.

Эти 30 лет явились годами подлинного возрождения армянского народа. Целиком и полностью оправдались слова нашего великого вождя и учителя товарища Сталина о том, что только Советская власть принесла Армении мир и возможность национального обновления.

И вот сегодня, наблюдая жизнь Армении, мы видим на каждом шагу результаты этого великого обновления, связанного с установлением Советской власти, с осуществлением всех мероприятий, которые проводит Советская власть. Поэтому 30-летие Советской Армении является самым большим праздником для армянского народа.

30 лет армянский народ в тесном содружестве с народами других республик имел возможность свободно жить, творить и свободно строить коммунистическое общество.

Установление Советской власти в Армении было величайшим событием в жизни армянского народа и произошло оно в самый трагический момент его истории, когда наш народ стоял на грани полного истребления, вследствие коварной политики англо-американских интервентов и их послушных слуг, турецких захватчиков.

Навсегда и добровольно армянский народ связал свою судьбу с судьбой народов других советских республик и прежде всего с судьбой великого русского народа.

Успехи нашего народа удивительны. Мы видим их в промышленности, мы видим их в сельском хозяйстве нашей республики.

Наша республика, в прошлом отсталая в отношении своего экономического развития, республика, где вообще было мало машин,—сегодня стала республикой, которая не только сама производит машины, но даже вывозит их из пределов республики. Во всем этом сказываются успехи нашей быстро растущей промышленности. В области сельского хозяйства колхозный строй создал необычайные возможности для улучшения жизненного уровня нашего народа и полного снабжения городов.

Особенно велики успехи в области народного образования и науки.

Тот факт, что в Армении имеется много десятков научно-исследовательских учреждений и институтов, является предметом гордости нашего народа. Не так давно мне пришлось побывать в Швейцарии. Страна эта не производит того впечатления, которое, казалось бы, должно остаться от этой „цивилизованной" страны Западной Европы. Мы не нашли здесь интереса интеллигенции к тому, что делают ученые в ней, над чем они работают.

Совершенно иное положение мы видим во всех наших республиках, где работники науки имеют неограниченные возможности для своего развития и чувствуют постоянное внимание широких масс народа. Все это сделала Советская власть за истекшие 30 лет.

Но особенно важно и дорого для нас, работников советской науки, то, что у нас тесное содружество со всеми другими учеными Советского Союза, то, что мы имеем возможность воспитывать наши молодые кадры на примере русской науки. И мы ставим своей задачей—всемерно укреплять связь между работниками науки наших республик и прежде всего наши связи с русской наукой, которая внесла так много ценного и великого в историю мировой науки. Необходимо всемерно укреплять и в дальнейшем сотрудничество ученых всех республик Советского Союза.

В связи с этим я должен отметить почин Академии наук СССР, которая всегда, как известно, идет на помощь республиканским академиям. Почин этот заключается в том, что она решила организовать сессию своего отделения истории и философии совместно с отделением общественных наук АН Арм. ССР в Армении, в городе Ереване, в связи с 30-летием нашей республики.

Это является признаком большого внимания и заботы о дальнейшем прогрессе науки в Советской Армении со стороны Академии наук СССР и, прежде всего, со стороны президента Академии наук СССР тов. Вавилова.

Я должен выразить сожаление, что здесь не смог присутствовать академик Греков, о чем он уведомил нас телеграммой. Он чрезвычайно желал приехать в Ереван.

Я думаю, что эта сессия окажет конкретную пользу всем, кто будет участвовать в ней, а также и тем, кто будет знакомиться с ее материалами со стороны.

Я выражаю пожелание, чтобы работы этой сессии прошли не только в нашем тесном кругу, но чтобы она принесла результаты, которые оставят след в развитии советской науки.

Открывая настоящую сессию, я предлагаю приветствовать представителей науки Советского Союза, русских ученых, прибывших к нам на эту сессию, представителей Академии наук Грузинской и Азербайджанской республик—виднейших ученых нашей страны, которых мы имеем удовольствие видеть в этом зале.

Да здравствует дружба народов Советского Союза!

Да здравствует Советское государство!

Да здравствует любимый вождь, учитель и величайший ученый и мыслитель нашей эпохи, товарищ Сталин!

(Громкие продолжительные аплодисменты).

Պրեզիդենտ Վ. Համբարձումյանի ճառից հետո պատմ. գիտութ. դոկտոր Մ. Ներսիսյանը զեկուցեց «Անգլո-ամերիկյան իմպերիալիստների պլանների ապալումը 1919—1920 թվերին Անդրկովկասում և սովետական իշխանության հաստատումը Հայաստանում թեմայով։

Ընկ. Մ. Ներսիսյանը արխիվային հարուստ փաստերով ցույց տվեց, թե անգլո-ամերիկյան իմպերիալիստները ինչպիսի քայքայիչ աշխատանք էին կատարում Անդրկովկասում, այդ թվում Հայաստանում, հայ ժողովրդին ստրկացնելու համար, ինչպիսի նենգ միջոցներ էին դիմում Սովետական Ռուսաստանի դեմ պայքարելու համար։

Անդրկովկասի ժողովուրդները իրենց ազատագրությունը կապված էին տեսնում Սովետական իշխանության հաղթանակի հետ, և բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ պայքար էին մղում օտարերկրյա օկուպանտների և այդ օկուպանտների հլու կամակատար ու գործակալ, Անդրկովկասի ժողովուրդների ոխերիմ թշնամի դաշնակների, մենշևիկների ու մուսավաթականների դեմ։ Անդրկովկասի ժողովուրդների պայքարը պսակվեց հաղթանակով։

1920 թվի սկզբին Սովետական Ռուսաստանը խոշոր հաղթանակ տարավ քաղաքացիական պատերազմի ֆրոնտներում։ Լենինի և Ստալինի ցուցումով, Կարմիր Բանակի զորամասերի օգնությամբ ազատագրվեցին Հյուսիսային Կովկասի և Դաղստանի ժողովուրդները և ապա 1920 թ. ապրիլի 28-ին մտնելով Բաքու, օգնության հասան Բաքվի պրոլետարիատին և Ադրբեջանի աշխատավորությանը, տապալեցին մուսավաթիստների կոնտրռևոլյուցիոն կառավարությունը և Սովետական իշխանություն հաստատեցին Ադրբեջանում։

1920 թվի սեպտեմբերին Անգլիայի և Ամերիկայի դրդմամբ սկսված հայ-թուրքական պատերազմում դաշնակցական կառավարությունը լիակատար պարտություն կրեց։ Թուրքական զորքերի գրաված տերիտորիաներում թուրքերի կազմակերպած մասսայական կոտորածներն ու հայ ազգաբնակության բնաջնջումը, ինչպես և սովը, մասսայական մահացությունը, ֆիզիկական ոչնչացման վտանգի տակ էին դրել հայ ժողովրդին, որին այդ օրհասական պայմաններում 1920 թվի նոյեմբերին օգնության հասավ ռուս մեծ ժողովուրդը։ Կարմիր Բանակի զորամասերը մտան Հայաստան։ Դաշնակների կառավարությունը տապալվեց և երկրում հաստատվեց Սովետական իշխանություն։ Իրականացավ հայ ժողովրդի երազը։ Հայ ժողովուրդը, ՍՍՌՄ մյուս ժողովուրդների մեծ ընտանիքում սկսեց կերտել իր նոր և երջանիկ կյանքը, անցած 30 տարիների ընթացքում ձեռք բերելով վիթխարի հաջողություններ՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, կուլտուրայի ու գրականության բնագավառում։

Պրոֆ. Մ. Ներսիսյանի զեկուցումից հետո, «Սովետական Հայաստանը 30 տարում» զեկուցումով հանդես եկավ պատմական գիտ. դոկտոր Ծ. Աղայանը։ Զեկուցողը փաստական հարուստ տվյալներով ցույց տվեց այն ուղին, որ անցել է Սովետական Հայաստանը 30 տարվա ընթացքում։

Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում շրջադարձային կետ հանդիսացավ հայ ժողովրդի կյանքում։ Սկսվեց էկոնոմիկայի և կուլտուրայի չտեսնված վերելք։ Լենինի ցուցումով Հայաստանի աշխատավորները կարգավորեցին երկրի ոռոգման սիստեմը, անցկացրին գյուղատնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող ջրանցքներ։ Աշխուժացավ արդյունաբերությունը և շարքի անցան շատ գործարաններ ու արդյունաբերական հիմնարկներ։ Վերականգնման շրջանին հաջորդեց 1929 թվի սոցիալիստական ինդուստրիալիզացիայի և գյուղատնտեսության կոլեկտիվիզացիայի բնագավառներում տեղի ունեցած մեծ բեկումը։ Հայաստանի աշխատավորները մեծ չափով ծավալեցին սոցմրցումն ու հարվածայնությունը, տալով առաջին հնգամյակի վերջին. գրեթե չորս անգամ ավելի արդյունաբերական արտադրանք՝ 1927—1928 թվականների համեմատությամբ։ Կոլխոզներում միավորված գյուղացիությունն արդեն կանգնել էր ունևոր և կուլտուրական կյանքի ուղու վրա։ Երկրորդ հնգամյակի ընթացքում երևան եկան նոր գործարաններ և զգալի չափով աճեց արդյունաբերական արտադրանքը ժողովրդական տնտեսության մեջ։

Ընկ. Աղայանը կոնկրետ օրինակներով ցույց տվեց հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի ունեցած մասնակցությունը։ Հետպատերազմյան հնգամյակի չորս տարվա ընթացքում Հայաստանում կառուցվել և շահագործման են հանձնվել ավելի քան 50 արդյունաբերական ձեռնարկություններ, ընդլայնվել և վերակառուցվել է 27 ձեռնար-

կությունը։ Մեծ հաջողություններ են ձեռք բերվել նաև գյուղատնտեսության բնագավառում, ընդլայնվել են ցանքային տարածությունները և բարձրացել գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը։ Աշխատավորության նյութական-կենցաղային պայմանների բարելավման փայլուն ապացույց է կուլտուր-լուսավորական հիմնարկների և բնակելի տների շինարարության ծավալումը ռեսպուբլիկայում։ Մեծ աշխատանք է կատարված քաղաքների և գյուղերի կանաչապատման, ինչպես նաև ոռոգման և հեռախոսային անցկացման ուղղությամբ, 1948-1949 թվերին ռեսպուբլիկայում աշխատել են 1193 դպրոցներ. ներկայումս կան 53 տեխնիկումներ, 14 ստացիոնար և 3 հեռակա ԲՈՒՀ-եր, Գիտությունների Ակադեմիան՝ իր 33 ինստիտուտներով և գիտա-հետազոտական հիմնարկներով։

Հոկտեմբերի 27-ին տեղի ունեցավ սեսիայի երկրորդ նիստը։ «Սովետական իշխանության հաղթանակը Վրաստանում՝ 1921 թվի փետրվարին» թեմայով զեկուցեց ՍՍՌՄ Գիտ. Ակադեմիայի թղթակից անդամ Փ. Վ. Մախարաձեն։ Ընկեր Մախարաձեն իր բովանդակալից և հետաքրքիր զեկուցման մեջ մանրամասն շարադրեց այն պայքարը, որ մղել է վրացական ժողովուրդը մենշևիկյան կառավարության դեմ, հանուն սովետական կարգերի հաղթանակի Վրաստանում։ Մենշևիկյան կառավարությունն իր տիրապետության տարիներին Վրաստանը հասցրել էր քայքայման աստիճանի՝ լիակատար կախման մեջ դնելով օտարերկրյա օկուպանտներից։ Ժողովրդական մասսաները քանի գնում ավելի էին համոզվում, որ վրացական ժողովրդի ազատագրության ուղին Սովետական իշխանություն հաստատելու ուղին է, իսկ այդ ուղին անցնում է մենշևիկյան կառավարության դեմ մղվող հետևողական պայքարի միջով։

Ադրբեջանում և Հայաստանում Սովետական իշխանություն հաստատվելուց հետո Վրաստանում արագ կերպով աճեց մասսաների բոլշևիկացումը։

Վրաստանի կոմունիստները ծավալեցին եռանդուն գործունեություն զինված ապստամբության նախապատրաստման ուղղությամբ։ Հաշվի առնելով արտաքին և ներքին բարենպաստ պայմանները՝ ՌԿ(բ)Պ ԿԿ Կովկասյան բյուրոն ընկեր Օրջոնիկիձեի ղեկավարությամբ 1921 թվի հունվարին դիրեկտիվ տվեց Վրաստանի ԿՊ-ի ԿԿ-ին զինված ապստամբություն սկսելու համար։ Ապստամբությունը ղեկավարելու համար փետրվարի 16-ին կազմվեց Վրաստանի Ռևոլյուցիոն Կոմիտե, որը հայտարարեց Վրաստանում Սովետական իշխանություն։

Մենշևիկյան կառավարությանն շտապեցին օգնության հասնել եվրոպական ռեակցիոն ուժերը։ Ռևկոմը բանվորների և գյուղացիների կողմից օգնություն խնդրեց ՌՍՖՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի նախագահ Վ. Ի. Լենինից։ ՌԿ(բ)Պ ԿԿ որոշմամբ և Վ. Ի. Լենինի ու Ի. Վ. Ստալինի անմիջական ցուցումով Վրաստանի աշխատավորական մասսաներին անհապաղ օգնության հասավ 11-րդ բանակը՝ Գ. Կ. Օրջոնիկիձեի և Ս. Մ. Կիրովի ղեկավարությամբ։ Վրաստանի աշխատավոր գյուղացիությունը ամեն կերպ օգնություն էր ցույց տալիս Կարմիր Բանակի ռևոլյուցիոն ջոկատներին և զորամասերին։

1921 թվի փետրվարի 25-ին զինված աշխատավորներն ու Կարմիր Բանակը մտան Վրաստանի մայրաքաղաքը՝ Թիֆլիս։

Ընկեր Գ. Օրջոնիկիձեն հեռագրեց Վ. Ի. Լենինին և Ի. Վ. Ստալինին. «Թիֆլիսի վրա ծածանվում է Սովետական իշխանության կարմիր դրոշակը։ Կեցցե Սովետական Վրաստանը»։

Վրացական ժողովուրդը Լենին-Ստալինի դրոշով, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ մտավ իր պատմության մի նոր՝ սոցիալիստական դարաշրջանը։

Սեսիայի այդ նույն նիստում «Լեզուների գենեալոգիական դասակարգման հիմունքները և լեզվի ստադիալ զարգացման վերաբերյալ Ն. Մառի հայացքների քննադատությունը» թեմայով զեկուցում տվեց Հայկական ՍՍՌ Գիտ. Ակադեմիայի իսկական անդամ Գր. Ղափանցյանը։ Ընկ. Գր. Ղափանցյանը բնորոշեց լեզուների ուսումնասիրության պատմա-համեմատական մեթոդի առանձնահատկությունները և մանրամասնորեն կանգ առավ նրանց գենեալոգիական դասակարգման վրա, այսինքն լեզուների ծագման և ազգակցության գծով տրված դասակարգման վրա, որը ժխտել է Ն. Մառը և առաջ է քաշել խոսքի կուլտուրայի զարգացման, այսպես կոչված ստադիալ փոփոխությունը։ Զեկուցողը Ի. Վ. Ստալինի՝ լեզվաբանության խնդիրների մասին տված հանճարեղ աշխատությունների լույսով քննադատության ենթարկեց Ն. Մառի՝ լեզուների զարգացման ստադիալականության վերաբերող սխալ, ոչ մարքսիստական հայացքները։

Ընկ. Ղափանցյանի զեկուցման առթիվ ելույթ ունեցավ Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Ա. Գ. Շանիձեն։

Սեսիայի երրորդ նիստում՝ հոկտեմբերի 28-ին լսվեց ակադեմիկոս Ի. Օրբելու «Պալատական շենքերը Հայաստանում X դարում» զեկուցումը։

Ակադեմիկոս Օրբելին իր զեկուցման մեջ Թովմա Արծրունու պատմագրի հաղորդած տվյալների և բազմաթիվ շինարարական տերմինների վերլուծման միջոցով ցույց տվեց, որ հայկական եկեղեցական ճարտարապետության մեջ տարածված մի քանի ճարտարապետական տիպերը, մասնավորապես գավիթներն ու սեղանատները ծագում են քաղաքացիական պալատական շինարվեստից, իսկ պալատներն իրենց հերթին ծագել են հայկական ժողովրդական տան՝ կոնաձև երդիկավոր գլխատան ճարտարապետական տիպից։ Զեկուցողը քննարկելով Աղթամարի Ս. Խաչ տաճարի վրա պահպանված հարուստ և բազմազան քանդակները, ցույց է տալիս, որ դրանք մեծ մասամբ կապ չունեն եկեղեցու և եկեղեցական իդեոլոգիայի հետ. ընդհակառակը՝ հակասում են նրան և անդրադարձնում հայ ժողովրդական հնամենի առասպելական պատկերացումները։ Աղթամարի տաճարի քանդակների էության, ձևի և տեխնիկայի անալիզը զեկուցողին նյութ է տալիս վերականգնելու X դարի պալատական շենքերի, մասնավորապես Աղթամարի պալատի ներքին հարդարանքի պատկերը։

Նույն նիստում զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՌ Գիտ. Ակադեմիայի թղթակից անդամ Բ. Բ. Պիոտրովսկին, «Թեյշեբաինի քաղաքը» թեմայով։ Զեկուցումը նվիրված էր Կարմիր-բլուրի պեղումներին, որոնք կատարել են Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հնագիտության էքսպեդիցիան և ՍՍՌՄ Պետական էրմիտաժը։ Կարմիր բլուրի պեղումները տվել են հարուստ նյութ, որը վերաբերում է Ուրարտու պետության և նրա ժամանակակից Անդրկովկասի կուլտուրային։

Ուրարտական Թեյշեբաինի քաղաքը, որը այդպես էր կոչվում պատերազմի, ամպրոպի և փոթորկի աստծու Թեյշեբի անունով, ներկայումս ՍՍՌՄ տերիտորիայի վրա ուսումնասիրվող բնակավայրերից ամենահինն է։ Պեղումների ժամանակ հայտնաբերված իրերը ցույց են տալիս, որ Թեյշեբաինի քաղաքը միշտ էլ ամենամոտ հարաբերությունների մեջ է եղել սկյութացիների հետ։ Կարմիր-բլուրի հետագա պեղումների նյութերը նոր լույս կսփռեն հեռավոր անցյալի հասարակարգի բազմաթիվ հարցերի վրա։

Հոկտեմբերի 30-ի առավոտյան նիստում լսվեց ակադեմիկոս Հ. Մանանդյանի զեկուցումը «Նոր դիտողություններ հունարեն արձանագրության և Գառնիի հեթանոսական տաճարի մասին» թեմայով։ Զեկուցողը 1945 թվի ամռանը Գառնիում գտնված հունարեն արձանագրության մասին տվեց նոր մեկնաբանություն, ինչպես և հայտնեց իր ենթադրությունը Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակի մասին։

Այնուհետև ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Կ. Վ. Տրեվերը զեկուցեց «Հայաստանի՝ մեր թվականության առաջին երեք դարերում եղած հուշարձանների ուսումնասիրության խնդիրները» նյութի մասին։ Զեկուցողը նշեց այն առաջնահերթ արխեոլոգիական խնդիրները, որոնք կապված են Հայաստանի կուլտուրայի և արվեստի պատմության ուսումնասիրության հետ, մեր թվականության առաջին երեք դարերում, և որոնց նկատմամբ ներկայումս որոշ հետաքրքրություն է առաջ եկել Հայկական ՍՍՌ Գիտ. Ակադեմիայի Պատմության ինստիտուտի կողմից Գառնիում տարվող պեղումների արդյունքների կապակցությամբ։

Ընկ. ընկ. Մանանդյանի և Տրեվերի զեկուցումների շուրջը ծավալվեցին վիճաբանություններ, որոնց մասնակցեցին ակադեմիկոս Հ. Օրբելին, Վրացական ՍՍՌ Գիտ. Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Ա. Շանիձեն և պատմական գիտությունների թեկնածու Բ. Առաքելյանը։

Երեկոյան նիստում լսվեց ՍՍՌՄ Գիտ. Ակադեմիայի թղթակից անդամ Ե. Ժուկովի զեկուցումը «Ամերիկյան ագրեսիայի ժամանակակից էտապը Ասիայում» թեմայով։ Ամերիկյան ագրեսիայի երկու էտապը,—ասում է զեկուցողը,—շարունակությունն է Ամերիկյան իմպերիալիզմի այն ագրեսիվ քաղաքականության, որն ունի կես դարի պատմություն։ Վլ. Իլիչ Լենինը նշում էր, որ աշխարհի վերաբաժանման զուտ իմպերիալիստական տիպի առաջին պատերազմը դա 1898 թվի իսպանա-ամերիկյան պատերազմն էր, որտեղ ամերիկյան իմպերիալիզմն առաջին անգամ ասպարեզ եկավ որպես Արևելքի ժողովուրդների շարանենգ կեղեքիչ։ Այդ ժամանակվանից, այսինքն Ֆիլիպյան կղզիների գավթելու մոմենտից, իմպերիալիստական ագրեսիայի ամերիկյան քաղաքականության

մեջ զազար չի եղել Ասիայում։ Փոխվել են միայն այդ քաղաքականության ձևերը, բայց ոչ նրա էությունը։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, կապիտալիստական պետությունների պայքարը Ասիայի շուկաների համար ավելի մեծ չափով սրվեց։ Ասիայի երկրներին տընտեսապես ստրկացնելու նպատակ ունենալուց բացի, Միացյալ Նահանգները խնդիր դրեցին Ասիայի երկրները դարձնել իրենց ռազմա-հումքային բազան, դարձնել պլացդարմ ՍՍՌՄ և ժողովրդական դեմոկրատիայի դեմ մղվելիք պատերազմի համար։ Այդ ագրեսիվ քաղաքականությունը 1949 թվին խայտառակ ձախողման հասցրեց Ամերիկայի Միացյալ Նահանգներին։ Չինական մեծ ժողովուրդը թոթափեց իրենից իմպերիալիստական ստրկության լուծը, ստեղծեց իր անկախ դեմոկրատական պետությունը և մտավ Սովետական Միության կողմից գլխավորվող խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի հզոր լագերը։ Կապիտալիզմի սիստեմից Չինաստանի դուրս ընկնելը մեծ հարված էր իմպերիալիզմին և առաջին հերթին ԱՄՆ-ի իմպերիալիզմին։

Չնայած ամերիկյան իմպերիալիստական ագրեսիայի լայն թափին, այդ ագրեսիան ծավալվում է իր համար աննպաստ միջազգային պայմաններում։ Սովետական Միության կողմից գլխավորվող խաղաղության, սոցիալիզմի և դեմոկրատիայի լագերը և վերջինիս հարող ազգային-ազատագրական շարժման ընդարձակ ֆրոնտը Ասիայում—ահա այն ուժերը, որոնք կանգնած են ամերիկյան ագրեսիայի դեմ հանդիման և կանխորոշում են նրա ձախողումը։

Ամերիկյան ագրեսորների ռազմանությունները Կորեայում, չեն կարող սասանել կորեական ժողովրդի լիակատար ազգային անկախություն ձեռք բերելու կամքը։ Ամերիկյան իմպերիալիստական ագրեսիայի ժամանակակից էտապը, ինչպես հաստատում է զեկուցողը, վկայում է ոչ թե կապիտալիզմի ուժի, այլ նրա թուլության մասին։ Ագրեսորի տապալվելն անխուսափելի է։ Խաղաղության ստալինյան քաղաքականությունը կհաղթանակի։

«ԱՄՆ-ի ագրեսիան Իրանում 1941—1945 թ.թ.» թեմայով զեկուցեց պատմական գիտությունների թեկնածու Մ. Պոպովը։

Ամերիկյան կապիտալի Իրան մտնելը սկսվել է դեռևս 19-րդ դարի 2-րդ կեսից, բայց այն ժամանակ Ամերիկային որևէ չափով չի հաջողվել դիրքեր գրավել Իրանում, դրան խոչընդոտ էին հանդիսանում Անգլիան և Ռուսաստանը, որոնք ուրիշներից ավելի շուտ էին հաստատել այնտեղ իրենց ազդեցությունը։ Ամերիկայի մոնոպոլիստական շրջանները Իրանի նկատմամբ առանձին շահագրգռվածություն դրսևորեցին 20-րդ դարի սկզբին, երբ Իրանի հարավում անգլիացիներն սկսեցին նավթի արդյունաբերական մշակումը։ ԱՄՆ-ի պրեզիդենտի նախաձեռնությամբ և մոնոպոլիստական նավթային տրեստների ճնշմամբ ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը 1911 թվին Իրան ուղարկեց Շուստեր Մորգանի միսիան։ Տասն տարի հետո ամերիկյան իմպերիալիստները վերստին փորձեցին հաստատել իրենց հսկողությունն Իրանի վրա և զավթել նրա նավթային ռեսուրսները։ Ամերիկյան իմպերիալիզմի այդ երկու փորձերն էլ անհաջող անցան։ Նրանք չկարողացան իրենց թաթը դնել Իրանի վրա։

Ամերիկյան իմպերիալիզմի ժամանակակից էտապը Իրանում սկսվել է երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբում։ Պատերազմի սկզբում ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը հատուկ ծրագիր մշակեց, այսպես կոչված խորհրդականներ և միսիաներ Իրան ուղարկելու համար։

ԱՄՆ-ի զինվորական մինիստրությունը պետական դեպարտամենտից պակաս չափով չէր մտահոգված, որ ամերիկյան իմպերիալիզմը թափանցեր Միջին-Արևելք և հատկապես Իրան, ուր 1941 և 1942 թվականին նախօրոք պատրաստված հատուկ զորքեր փոխադրեցին։ Ամերիկյան զորքերի այդ տեղաշարժը դեպի իրանական տերիտորիան տեղի էր ունենում համաշխարհային հասարակայնությունից միանգամայն գաղտնի, չէր տրվում ոչ մի պաշտոնական հաղորդագրություն։

Զեկուցման եզրափակիչ մասում ընկ. Պոպովը ասաց, թե ամերիկյան իմպերիալիզմն ինչ մեթոդներով և միջոցներով է Իրանը դարձնում իր գաղութը և ռազմա-ստրատեգիական բազա՝ Սովետական Միության դեմ։

Իրանի դեմոկրատական կազմակերպությունները, գտնվելով ընդհատակյա ծանր պայմաններում, այնուամենայնիվ մերկացնում են անգլո-ամերիկյան ագրեսորներին։ Նրանք մյուս ժողովուրդների հետ միասին, պայքարելով խաղաղության և դեմոկրատիայի համար, դեմ են դուրս գալիս պատերազմի հրձիգներին, իրենց երկիրը գաղութացնողնե-

րին։ Այդ կազմակերպությունները անսահման հավատով են լցված դեպի Սովետական մեծ Միությունը, որը գլխավորում է խաղաղության և դեմոկրատիայի բանակին։

Սեսիայի վեցերորդ նիստում, հոկտեմբերի 31-ին «Սովետական բյուզանդագիտության խնդիրները» թեմայով զեկուցեց Ստալինյան մրցանակի լաուրեատ ակադեմիկոս Ե. Կոսմինսկին։

Մարքս-լենինյան մեթոդոլոգիայի հիման վրա Բյուզանդիայի պատմության ուսումնասիրությունը,—ասում է զեկուցողը,—սովետական պատմագիտության հրատապ խնդիրներից մեկն է։ Բյուզանդիայի պատմությունը հատկապես հետաքրքիր է սովետական պատմաբաններին, որովհետև նա սերտորեն կապված է մեր հայրենիքի ժողովուրդների և հատկապես ռուսական, հայկական և վրացական ժողովուրդների պատմության հետ։ Բյուզանդիայի պատմությունը սերտ կերպով կապված է հարավային և արևմտյան սլավոնների պատմության հետ։ Բյուզանդիան առաջատար տեղ է գրավել վաղ միջնադարի միջազգային հարաբերություններում և կուլտուրայում։ Բյուզանդիայի պատմությունը բուրժուական գիտության կողմից ինչպես անցյալում, այնպես և ներկայումս խիստ ֆալսիֆիկացիայի է ենթարկվում։ Այդ ֆալսիֆիկացիան վերջին ժամանակներս հատկապես սաստկացել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում։ Այդ հանգամանքը վճռական հակահարված է պահանջում սովետական գիտնականների կողմից։ Պայքարը բուրժուական պսևդո գիտության դեմ, վերջինիս մերկացնելն ու խորտակելը սովետական պատմաբանների ամենահրատապ խնդիրներից մեկն է։ Այնուհետև Ե. Կոսմինսկին բնորոշում է այն աշխատանքը, որ կատարել են սովետական պատմաբանները՝ ըստ բյուզանդագիտության առանձին խնդիրների։ Պատրաստված են մի շարք մասնագիտական հետազոտություններ, ընդհանուր տեսություններ, հոդվածներ, կատարված են կարևորագույն աղբյուրների թարգմանություններ։ Պատրաստված են Բյուզանդիայի պատմության մասնագետ երիտասարդ կադրեր։ Խոսելով սովետական բյուզանդագիտության առջև դրված պրոբլեմների մասին, ակադեմիկոս Կոսմինսկին նշում է Բյուզանդիայի պատմության պերիոդիզացիայի, հնադարյան ստրկատիրական հասարակությունից դեպի միջնադարի ֆեոդալական հասարակությունը կատարված անցման մասին, սլավոնական կոլոնիզացիայի դերի մասին Բյուզանդիայի պատմության մեջ, բյուզանդական ֆեոդալիզմի առանձնահատկությունների մասին, ժողովրդական շարժումների, ապստամբությունների և բյուզանդական կառավարության անկման պատճառների մասին։

Բյուզանդիայի պատմությանը վերաբերող աշխատանքների մեջ,—շարունակում է զեկուցողը,—սովետական գիտնականները շարունակ հանդիպում են Հայաստանի պատմության հետ կապ ունեցող խնդիրների։ Քանի գնում, այնքան ավելի է պարզվում, թե ինչ ահագին դեր է խաղացել Հայաստանը Բյուզանդիայի պատմության մեջ։ Սովետական բոլոր բյուզանդագետների համատեղ աշխատանքը կարող է այստեղ մեծ արդյունք տալ։ Մեր մեծ հայրենիքի ժողովուրդներից և ոչ մեկը,—ասում է վերջում ակադեմիկոս Կոսմինսկին,—իր անցյալում Բյուզանդիայի պատմության հետ այնպես չի եղել կապված, ինչպես հայ ժողովուրդը։ Սովետական Միության մեջ ոչ մի տեղ չկա Բյուզանդիայի պատմության և հայ-բյուզանդական հարաբերություններին վերաբերող աղբյուրների և նյութերի մի այնպիսի հարուստ հավաքածու, ինչպիսին ունի Հայաստանի Պետական Մատենադարանը։ Հայաստանը Սովետական Միությունում բյուզանդագիտության կարևորագույն կենտրոնը դառնալու բոլոր հիմքերն ունի։ Սովետական բոլոր ռեսպուբլիկաների գիտնականների համատեղ աշխատանքն է՛լ ավելի կամրապնդի ժողովուրդների այն բարեկամությունը, որը Սովետական Միությունը դարձնում է անհաղթահարելի ուժ և ապահովում է նրա հաղթանակը ամբողջ աշխարհում խաղաղության համար մղվող պայքարի մեջ։

ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտ. աշխատակից Ս. Երեմյանը զեկուցեց «Հայաստանի պատմության պերիոդիզացիան ֆեոդալիզմի դարաշրջանում» թեմայով։ Հայաստանի պատմության կոնկրետ պայմաններում ֆեոդալական հասարակության պերիոդիզացիան նպատակ ունի ցույց տալու այդ հասարակության ծնունդը, ամրապնդումն ու կործանումը։ Ընկ. Երեմյանը նշում է Հայաստանի ֆեոդալիզմի զարգացման 3 գլխավոր շրջաններ։

Առաջին շրջան—Ֆեոդալական հարաբերությունների հասունացման շրջան (I—V դ), որն իր մեջ է առնում նախարարական հասարակությունը, տնտեսավարության նախարարական սիստեմն ու քաղաքական իշխանությունը և նախարարական սիստեմի անկման շրջանը (արաբական տիրապետության դարաշրջան)։ Զեկուցողն օրինակներով ցույց

է տալիս, որ այդ շրջանը, որպես վաղ-ֆեոդալական հարաբերությունների շրջան, ֆեոդալական հասարակության գոյացման շրջանն է։

Երկրորդ շրջան—Հայկական միջնադար (9—13)։ Այդ շրջանին են վերաբերում ժողովրդա-ազատագրական շարժումներն ընդդեմ արաբների. Շիրակի բագրատունիների քաղաքական սիստեմը, հայկական ֆեոդալիզմի ճգնաժամը—(սելջուկյան թուրքերի տիրապետության դարաշրջան). վերածնության և հայկական ֆեոդալիզմի հետագա զարգացման ժամանակը։

Այս շրջանը բնորոշվում է ֆեոդալիզմի վերջնական հաղթանակով, հասունացած ֆեոդալական հարաբերությունների հաստատվելով, ֆեոդալական քաղաքի զարգացմամբ, այդ քաղաքի՝ համաշխարհային առևտրի մեջ ներգրավվելով։

Երրորդ շրջան—Հայկական ֆեոդալիզմի երկարատև և սիստեմատիկ քայքայման ու կործանման շրջան, որն իր մեջ է առնում Հայաստանի հասուն միջնադարյան հասարակության քայքայման ժամանակը (մոնղոլ-թաթարական լծի դարաշրջան), նվաճող ցեղերի ներսում եղած ֆեոդալիզմի վերջանալու ժամանակը, կիսանահապետական-կիսաֆեոդալ հարաբերությունների տիրապետության ժամանակը, օսմանյան Թյուրքիայի և սեֆևյան Իրանի տիրապետության ժամանակը՝ Հայաստանում, Հայաստանի տնտեսական, քաղաքական և կուլտուրական անկման ժամանակը Թյուրքիայի և Պարսկաստանի իշխանության օրով, ֆեոդալական հարաբերությունների քայքայման և կապիտալիստական հասարակության գոյացման ժամանակը (վերջինս վերաբերում է միայն այժմյան Սովետական Հայաստանի տերիտորիային)։ Այս շրջանն ընդգրկում է 18-րդ դարի երկրորդ կեսը։

Սեսիայի յոթերորդ և վերջին նիստը տեղի ունեցավ նոյեմբերի 1-ին։ «Վերածնության պրոբլեմը» թեմայով զեկուցում կարդաց ՍՍՌՄ Գիտութ. Ակադեմիայի թղթակից անդամ Վ. Ն. Լազարևը։

Ժամանակակից բուրժուական պատմագրության անկումը,—ասում է զեկուցողը,—թերևս ոչ մի տեղ այնպես ակնառու կերպով չի դրսևորվում, ինչպես իտալական վերածնության կուլտուրայի լուսաբանության մեջ։ Ծանրության կենտրոնը վերածնության դարաշրջանից դեպի միջին դարերը տեղափոխելու այդ տենդենցը աչքի է ընկնում ժամանակակից իտալական և ամերիկյան հեղինակների աշխատություններում, հեղինակներ, որոնք իրենց հետադեմ, հակագիտական հետևությունները հիմնավորելու համար բացահայտ կերպով կանգնել են պատմությունը կեղծելու ճանապարհին։

Էնգելսը մատնանշում է վերածնության կուլտուրայի առաջադեմ բնույթը։ Նա վերածնության դարաշրջանից է բխեցնում ժամանակակից բնագիտության, գրականության և ամբողջ նոր պատմության ակունքները։ Պատմության այդ փուլը նա իմաստավորում է որպես «միջնադարի ուրվականների չքացման» և «եկեղեցու հոգևոր դիկտատուրայի» տապալման մի ժամանակաշրջան։

Իմպերիալիզմի դարաշրջանի բուրժուական գիտությունն ամեն կերպ ճգնում է առոչինչ համարել վերածննդի պրոբլեմը։

Վերջին ժամանակներս վերածնության գաղափարի վրա առանձնապես պլանաչափ գրոհներ են կատարում բուրժուական պատմաբանները։

Ընկեր Վ. Մ. Լազարևը ծավալուն քննադատության ենթարկեց մի շարք բուրժուական ուսումնասիրողների, որոնք աշխատել են գովաբանել սխոլաստիկան, կաթոլիկությունը, գոթականությունը։

Իմպերիալիզմի դարաշրջանի բուրժուական պատմաբանների աշխատությունների մեջ ընդգծվում է զարգացման այն խիստ հաջորդականությունը, որը չգիտե ռևոլյուցիոն թռիչքներ, «բարի հին տրադիցիաներից» կատարվող խոտորումները։ Այդպիսի մոտեցման մեջ, ասում է զեկուցողը—Ռենեսանսը կորցնում է այն բոլոր նորը և առաջավորը, որի շնորհիվ Էնգելսը այնքան բարձր է գնահատել այն։

Կոծկելով ամեն տեսակի հակասությունները, պատմական պրոցեսը ներկայացնելով որպես աննկատելի փոփոխությունների մի հոծ շղթա, որպես խաղաղ էվոլյուցիա, բուրժուական պատմաբանները հենց դրանով էլ հող են նախապատրաստում, որ կարողանան ժամանակակից կյանքում էլ սկզբունքորեն ժխտել ռևոլյուցիոն թռիչքները։

«Ռենեսանսի պրոբլեմը Հայաստանում» թեմային էր նվիրված փիլիսոփայական գիտությունների դոկտոր Վ. Չալոյանի զեկուցումը։

Ընկ. Չալոյանը մատնանշում է, որ Հայաստանում, 10—11-րդ դարերի ժամանակաշրջանում և սելջուկների արշավանքից հետո 12—13-րդ դարաշրջանում հասունացած

*ֆեոդալիզմի ժամանակ նրա ընդերքում տեղի է ունեցել վաղ բուրժուական հասարակության առաջացման պրոցեսը։ Սոցիալ-տնտեսական մի այդպիսի դրություն պետք է ծներ և համապատասխան մտածելակերպ։ Այդպիսի աշխարհահայացք և աշխարհըմբռնողություն էր Հայաստանում փիլիսոփայության, գրականության և արվեստի վերածնությունը։*

*Վերլուծելով հայկական վերածնության իդեոլոգիայի առանձին ձևերը, զեկուցողը գալիս է այն եզրակացության, որ փիլիսոփայության, դրականության և արվեստի հայկական վերածնության գաղափարներն ու մտքերը հակադրվել են հայկական եկեղեցու դոգմատիկային և վիճարկել են եկեղեցական աշխարհահայացքի ամբողջ սիստեմի ճշմարտացիությունը։*

*Զեկուցման եզրափակիչ մասում ընկ. Չալոյանը ցույց է տալիս վերածնության պատմական զարգացման ընթացքը Արևմուտքում և Արևելքում։ Զեկուցողը գալիս է այն հետևության, որ Արևմուտքը հանդիսացել է Արևելքի հաջորդը։ Առաջինի կուլտուրայի աղբյուրները մենք գտնում ենք երկրորդի մոտ։ Այն, ինչ որ արել է Արևելքը, անհրաժեշտ սկիզբ է եղել Արևմուտքի համար, հետևաբար, Արևմուտքում եղած վերածնությունը Արևելքի վերածնության շարունակությունն է, նրա մի նոր բարձր էտապը։*

*Ընկ. ընկ. Լազարևի և Չալոյանի զեկուցումների առթիվ տեղի ունեցած մտքերի փոխանակությանը մասնակցեցին գրականագետ Ա. Կարինյանը և պատմ. գիտությունների թեկնածու Ի. Առաքելյանը։*

*Սեսիայի վերջին նիստում հանդես եկավ Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ-ի թղթակից անդամ Մ. Շիրալիեը և ասաց.*

Разрешите от имени делегации Академии наук Азербайджанской ССР принести благодарность Академии наук Армянской ССР за ценную научную сессию Отделения общественных наук Академии наук Армянской ССР совместно с отделением истории и философии Академии наук СССР, которая еще больше обогатила нашу науку.

Прочитанные доклады на сессии и оживленная дискуссия по этим докладам еще раз показали ценность и актуальность тематики сессии.

Научная сессия продемонстрировала значительное развитие общественных наук в Армянской ССР. Мы особенно отмечаем огромное научное значение археологических раскопок, проводимых Академией наук Армянской ССР в Кармир-блуре, Двине и Гарни. Именно благодаря результатам этих раскопок выясняется ряд неразрешенных и спорных вопросов истории древней Армении, и руководство Академии наук Армянской ССР правильно поступило, развернув археологические раскопки в республике.

Будучи на местах раскопок, мы восхищались самоотверженной работой археологов Армянской ССР. Эта сессия еще раз показала ценность научной сессии, где можно ознакомиться с достижениями науки братских республик Советского Союза и потому нужно чаще созывать такие научные сессии во всех республиках. Мне бы хотелось в заключение пожелать, чтобы в ближайшем будущем была проведена совместная сессия Отделения языка и литературы Академии наук СССР совместно с институтами языка и литературы Академии наук Закавказских республик, где были бы освещены результаты перестройки в области языкознания, на основе гениальных работ товарища Сталина. Надо чаще практиковать печатание работ, освещающих вопросы и развитие общественных наук в республиках, в „Известиях" Академий наук братских республик.

Товарищи, разрешите от имени делегации Академии наук Азербайджанской ССР еще раз поблагодарить руководство Академии наук Армянской ССР за тот сердечный и дружеский прием, который был нам здесь оказан и также пожелать армянскому народу еще больше достижений во всех областях науки и культуры на благо нашей родины, на счастье всех трудящихся, идущих к сияющим вершинам коммунизма.

*Այնուհետև ելույթ ունեցավ ակադեմիկոս Ս. Կոսմինսկին և, ամփոփելով սեսիայի աշխատանքները, ասաց.*

Я думаю, мы можем сказать, что наша сессия прошла с большим успехом. С начала до конца она привлекала ***внимание общественности***, аудитория была всег-

да полна, часто переполнена. В ряде заседаний развернулись оживленные дискуссии Мы заслушали ряд интересных докладов, прочитанных русскими, армянскими, грузинскими учеными. Они были посвящены самым разнообразным вопросам истории и археологии. Нам были продемонстрированы великие успехи армянской археологии. Мы посетили Матенадаран. Первое место, естественно, было уделено XXX-летию советской власти в Армении, в ознаменование которого и была созвана эта сессия. В связи с этим был поставлен доклад и об установлении советской власти в Грузии.

Ряд тем был посвящен археологии, древней и средневековой истории Армении и сопредельных стран. Сегодня мы заслушали доклад о Ренессансе и о проблеме Ренессанса в Армении. Наконец, были доклады, посвященные вопросам новейшей истории, истории наших дней—об агрессии США в Иране, о современном этапе американской агрессии в Азии.

Для сессии характерен широкий размах исторической мысли от древнейших времен до наших дней. Темы по истории Армении, по справедливости занимали первое место, но достаточное внимание было уделено и истории других стран.

При этом вся работа сессии была проникнута одним господствующим *принципом: сессия была проникнута духом учения Маркса, Энгельса, Ленина, Сталина, она стояла на почве великой единственно научной теории марксизма-ленинизма, она дала отпор растленной реакционной науке современного буржуазного Запада.*

Для нас не менее важным фактом является то, что на сессию собрались ученые разных концов нашего Союза, кроме армянских и русских ученых, также ученые других Закавказских республик—Грузии и Азербайджана. Наша сессия была блестящей демонстрацией дружеской связи между учеными стран Советского Союза Пусть эта дружба и дальше укрепляется и растет, пусть крепнет содружество советских ученых для преуспеяния советской марксистско-ленинской науки. Постараемся закрепить эту дружбу рядом организационных мероприятий. В этом сотрудничестве мы видим выражение той великой дружбы народов, которая составляет силу Советского Союза и гарантию его непобедимости. Эта дружба не ограничивается рамками нашего Союза—она соединяет нас со всем прогрессивным человечеством. Наша наука—прогрессивная наука, в противоположность реакционной науке современной буржуазии, особенно науке американской, стоящей на службе магнатов Уолл-стрита. На нас, на нашу науку, на нашу страну с надеждой смотрит все прогрессивное человечество. В нашей стране видят светоч и знаменосца мира и мирного культурного развития. Мы твердо верим, что мир восторжествует над злобными происками акул империализма, стремящихся к разжиганию новой войны.

Мы были на раскопках Двина, мы видели невдалеке Аракс и турецкую, т. е., правильнее, американскую границу, т. к. самостоятельной Турции уже не существует, она продана своими правителями американским монополистам, поджигателям войны. Но мы вместе со всеми простыми людьми мира скажем—не выйдет! Силы мира восторжествуют над силами войны и мы можем быть горды, что своей скромной работой укрепляем дело содружества наций и дело мира.

Итак, товарищи, да здравствует советская наука, наука Маркса, Энгельса, Ленина, Сталина!

Да здравствует научное содружество ученых Советского Союза!

Да здравствует трудолюбивый, талантливый, высококультурный армянский народ, 30 лет тому назад вступивший в число братских советских республик!

Да здравствует дружба всех народов Советского Союза!

Да здравствует *мир во всем мире!*

Да здравствует наш великий вождь и учитель, великий ученый Иосиф Виссарионович Сталин!

*Դրանով ավարտվեց սեսիայի աշխատանքները*

*Վ. ՍԱՐԳՍՅԱՆ*